



Համաձայնեցված է  
Հայաստանի Հանրապետության  
Ֆինանսների նախարարության հետ

Վ. Գաբրիելյան  
2012թ.

Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր պետական  
եկամոտների կոմիտեի նախագահի  
Ժամանակավոր պաշտոնակատար

Ա. Աֆրիկյան  
14 2012թ.  
N 22

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ**  
**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ**  
**ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի հունիսի 22-ի ՀՕ-166-Ն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 1-ից: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նախկինում ստացված արտոնագրերի համար վճարված արտոնագրային վճարների գումարների վերահաշվարկներ չեն կատարվում:»:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) հրապարակվել է 2012 թվականի հուլիսի 11-ին «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» N33(907) համարում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 87-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 6-րդ կետով՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) ուժի մեջ մտնելու հետ կապված պաշտոնապես պարզաբանում եմ.

1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) դրույթները տարածվում են 2012 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

2. Եթե իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) N7 հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը ներկայացրել է 2012 թվականի հուլիսի 1-ից հետո և այդ հայտարարության համաձայն գործունեության իրականացման սկիզբ է համարվում 2012 թվականի հուլիս ամիսը, ապա այդ հայտարարությունում նշված ժամանակահատվածի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկվում է «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (22.06.2012թ. ՀՕ-166-Ն) սահմանված դրույքաչափերով:

3. Օրենքի N7 հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար մինչև 2012թ. հունիսի 30-ը ներկայացված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունների հիման վրա արտոնագրային վճարների չափերը հաշվարկվում են մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը գործող կարգին համապատասխան:

4. Մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը ստացված արտոնագրերի մասով 2012 թվականի հուլիսի 1-ից հետո ելակետային տվյալի ավելացման դեպքերում Օրենքի N8 հավելվածի 8-րդ կետին համապատասխան լրացուցիչ վճարման ենթակա արտոնագրային վճարը հաշվարկվում է 2012 թվականի հուլիսի 1-ից հետո գործող դրույքաչափերով: